

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«--» ----- 2018թ.

N ----- Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի
N 172-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևանի քաղաքապետի 2018 թվականի հունվարի 23-ի «Երևան-Իսելացի քաղաք» տեխնոլոգիական հիմնադրամ հիմնադրելու և հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին» N 172-Ա որոշումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի N 172-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի քաղաքապետի 2017 թվականի հուլիսի 13-ի N431-Ա կարգադրությամբ ստեղծվել է «Երևան-Խելացի քաղաք» ծրագրի մշակման և իրականացման հանձնաժողով, որի կազմում, բացի Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչներից, ընդգրկվել են նաև տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիաների ոլորտի առաջատար մասնագետներ: Հանձնաժողովն իրականացնում է արդյունավետ գործունեություն, որի առաքելությունն է տեղեկատվական բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ բարելավել Երևան քաղաքի բնակիչների կյանքի պայմանները, կատարելագործել բնակիչներին և այցելուներին (գրոսաշրջիկներին) մատուցվող ծառայությունների որակը, որի ապահովման ուղղությամբ հանձնաժողովի կողմից արդեն իսկ կազմակերպվել են մի շարք միջոցառումներ:

Հանձնաժողովի գերնպատակն է Երևանի քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում առկա հիմնախնդիրների և կենսագործունեության ապահովման նորարարական լուծումների և մոտեցումների ռազմավարության մշակումը և կոորդինացումը, որոնց հիմնական գաղափարը տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների և բանացանցի (Internet of Things, IoT) ինտեգրումն է քաղաքային տնտեսության կառավարման գործընթացում:

«Երևան-Խելացի քաղաք» ծրագիրը լիարժեք կյանքի կոչելու համար անհրաժեշտություն է առաջացել ստեղծել շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն, այն է՝ հիմնադրամ, որի միջոցով, որպես ինքնուրույն գործող իրավաբանական անձի, առավել արագ և արդյունավետ հնարավոր կլինի ապահովել այդ ռազմավարության կենսագործումը: Այդ նպատակով Երևանի քաղաքապետի 2018 թվականի հունվարի 23-ի N 172-Ա որոշմամբ հիմնադրվել է «Երևան-Խելացի քաղաք» տեխնոլոգիական հիմնադրամը և հաստատվել է հիմնադրամի կանոնադրությունը:

«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը և համայնքները կարող են լինել հիմնադրամի հիմնադիր՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով: Նույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ համայնքի կողմից կամ դրանց մասնակցությամբ հիմնադրամի հիմնադրումն իրականացվում է համայնքի ղեկավարի որոշմամբ՝ համայնքի ավագանու հաստատմամբ:

Սույն որոշման նախագծի անհրաժեշտությունը բխում է վերոնշյալ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի N 172-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

«Երևանի քաղաքապետի 2018 թվականի հունվարի 23-ի N172-Ա որոշումը հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի N 172-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

«Երևանի քաղաքապետի 2018 թվականի հունվարի 23-ի N172-Ա որոշումը հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ